Արարատ Վարդանյան

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

**Բանալի բառեր- Սփյուռքահայ կազմակերպություններ, բարերարներ, ԼՂՀ, բարեգործություն, կրթական, մշակութային, առողջապահական բնագավառներ:**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, լինելով չճանաչված պետություն, իր սոցիալ-տնտեսական, առողջապահական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական, մշակութային, եկեղեցական կազմակերպությունների և հիմնադրամ-ների օգնությունը: Ինչպես պատերազմից հետո, այնպես էլ այժմ, հարաբերական խաղաղության պայմաններում նրանց աջակցությամբ կյանքի են կոչվել ռազմավարական նշանակություն ունեցող շատ ծրագրեր, ոտքի են կանգնել գյուղեր ու քաղաքներ, կառուցվել և շահագործման են հանձնվել ճանապարհներ, գազատարներ, ջրագծեր, հիվանդանոցներ և այլն: Արցախին օգնելու գործում մեծ ավանդ ունեն սփյուռքահայ բարերարները, որոնք նվիրատվությամբ, ինչպես նաև առանձին համագործակցելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի, այլ կազմակերպությունների և ԼՂՀ կառավարության հետ, Արցախում իրականացնում են բազմաբնույթ ծրագրեր, այդ թվում կրթամշակութային բնագավառում:

Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դպրոցը կառուցվել է 1990-ական թվականներին՝ պատերազմական գործողությունները դադարեցվելուց հետո, արգենտինահայ բարերարներ Հովսեփ և Քրիստին Թախթաների կողմից[1]: Շուրջ երկու տասնամյակ անց Վաղուհասում նոր դպրոց կառուցվեց՝ երկու մասնաշենքով, 240 աշակերտի համար, ԼՂՀ կառավարության և գործարար Սամվել Ալեքսանյանի հատկացրած միջոցներով, իսկ հին դպրոցը տրամադրվեց համայնքի մանկապարտեզին[2]:

[1] Հիմնադրամ 1999, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Եր., 2000, էջ 22:
[2] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, Եր., 2012, էջ 25:

Ամերիկահայ Վաչե և Ռիտա Հովսեփյանները, կորցնելով իրենց 20-ամյա դստերը՝ Անիթային, բարի մարդկանց աջակցությամբ հիմնեցին «Անիթա Հովսեփյան» հիմնադրամ, որի միջոցներով 1998թ-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Աշան գյուղում կառուցվեց Անիթա անունը կրող միջնակարգ դպրոցը: «Անիթա Հովսեփյան» հիմնադրամի ներկայացուցիչներ տեր և տիկին Ցոլակ և Գոհար Հովսեփյանների աջակցությամբ 2010թ. սեպտեմբերին շահագործման հանձնվեց դպրոցին կից կառուցված Ցոլակ և Գոհար Հովսեփյանների անվան մարզադահլիճը և Խաչիկ Տեր-Մկրտչյանի անվան գրադարանը[1]:

1997 թվականից Շուշիում գործում է Դանիել Ղազարյանի անվան հանրակրթական երաժշտական դպրոցը, որը հիմնադրվել է ամերիկահայ հայտնի երգիչ, գեղանկարիչ, բարեգործ Կարեն Ղարիբյանի նախաձեռնությամբ, սփյուռքի մեր հայրենակիցների նյութական և բարոյական աջակցությամբ: Դպրոցը բացվեց 30 աշակերտով, իսկ 2012 թվականին ուներ 12 դասարան՝ մոտ 120 աշակերտով: Սկսած 2010թ-ից՝ դպրոցը պետության կողմից ֆինանսավորվեց 50%- ով (աշխատավարձի մասով), իսկ հաջորդ տարի՝ 70%-ով[2]: ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ 2013թ. հունվարից դպրոցի ֆինանսավորումը (աշխատավարձի մասով) կատարվում է պետբյուջեի հաշվին, բացի այդ՝ կառավարությունը դպրոցին նվիրել է լաբորատորիաներ՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա առարկաների համար:

Ֆրանսահայ բարերաներ Կարպիս և Նիկոլ Նիկողոսյան ամուսինները 2002թ. Մարտունու շրջանի Շեխեր գյուղում կառուցեցին երկհարկանի դպրոցի շենք՝ ի հիշատակ Կարպիսի հոր և մոր Նիկողոս և Էրմինե Նիկողոսյանների: Դպրոցը նախատեսված է 132 աշակերտի համար[3]: Ավելի ուշ դպրոցին կից շահագործման հանձնվեց սպորտդահլիճը:

Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղի դպրոցի վերանորոգման աշխատանքները 2003 թվականին իրականացվել է բարերար Վարուժան Քչիքյանի ֆինանսավորմամբ[4], իսկ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Էդիկ Էրմյանի միջոցներով նորոգվել է Մարտակերտ քաղաքի մանկական կրոնադաստիարակչական կենտրոնի շենքը[5]:

---

[1] «Ազատ Արցախ», 14 հոկտեմբերի 2010:
[2] «Ազատ Արցախ», 3 հուլիսի 2012:
[3] “Карабахский экспресс”, апрель-сентябрь 2006 N 2-3, стр. 47-48:
[4] ԼՂՀ պետական արխիվ, Ֆ.180, ց.1, կ-10, պ.մ.45, թ.55:
[5] Նույն տեղում, ֆ.345, ց.2, կ 10, պ.մ.3, թ.4:

Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի դպրոցի շենքը վերակառուցվել է ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» կազմակերպության համանախագահներ, ամուսիններ Նելլի Մարտիրոսյանի և Ստեփան Սարգսյանի ջանքերով: Շենքն ամբողջությամբ վերափոխվել է և աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, հարմարվետությամբ[1]:

Ստեփանակերտի հմ.11 եռահարկ դպրոցի շինարարության նվիրատուներն էին ամերիկահայ բարերար Ջերարդ Թրփանջյանը, «Հայաստան» համահայկական հիմ-նադրամի ԱՄՆ-ի Արևմտյան շրջանի տեղական մարմինը[2]: Կրթօջախը շահագործման է հանձնվել 2010թ. ամռանը:

Ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ Սարկիսովի տրամադրած ֆինանսական միջոցներով (շուրջ 3 մլն դոլար) կառուցվեց և շահագործման հանձնվեց Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հմ. 3 միջնակարգ դպրոցը[3]: Նրա եղբայր Նիկոլայ Սարկիսովի միջոցներով հաջորդ տարի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ին, շահագործման հանձնվեց Ստեփանակերտի հմ.1 հիմնական դպրոցի մասնաշենքը: Դպրոցի շինարարության վրա ծախսվել է 1մլրդ 600 մլն դրամ, մեկ աշակերտական տեղի համար ծախսվել է 520 ԱՄՆ դոլար: Այսօր դպրոցում ուսանում է շուրջ 1300 աշակերտ[4]:

Ռուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով հիմնովին նորոգվեց Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի շենքը: Սա, ի թիվս կարևորագույն այլ ձեռնարկների, «Մեր Շուշին» ծրագրի հիմնական բաղադրիչներից է: Դպրոցը եռահարկ կառույց է, ունի չորս մասնաշենք, որոնք նախատեսված են 1200 աշակերտի համար: Շուշեցի դպրոցականների թիվը դեռևս երեք անգամ պակաս է[5]:

Ֆրանսահայ Եզնիկ Մոզյանի կտակով Շուշիում կառուցվում է արհեստագործական ուսումնարան, որը նախատեսված է 225 ուսանողի համար: Ուսումնարանը մոտ չորս հազար քառակուսի մետր մակերեսով երկհարկանի շինություն է: Այն ունենալու է հանրակրթական առարկաների և արհեստների ուսուցման համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները[6]: Ուսումնարանն իր

[1] «Ազատ Արցախ», 18 սեպտեմբերի 2014:
[2] Նույն տեղում, 21 մայիսի 2009:
[3] Նույն տեղում , 4 մայիսի 2013:
[4] Նույն տեղում, 14 հոկտեմբերի 2014:
[5] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 20:
[6] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2013, տարեկան հաշվետվություն, եր., 2014, էջ 20:

գործունեությունը սկսելու է 2015թ., իսկ բարերար Լևոն Նազարյանի ընտանիքը հովանավորում է ուսումնարանի հանրակացարանի շենքի վերակառուցումը[1]:

2012թ. ամռանը կանադահայ բարերար, բժիշկ սրտաբան Ալբերտ Մելիք-Ղասումյանի ֆինանսական միջոցներով շահագործման հանձնվեց Արցախի պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգված ու կահավորված 4-րդ և 5-րդ հարկերը, ավելի քան հինգ տասնյակ ուսանողների համար: Չորրորդ հարկը նվիրված է բարերարի եղբոր՝ Սերգեյ Մելիք-Ղասումյանի, իսկ հինգերորդը՝ քրոջ Ժուլիետ Մելիք Ղուսամյանի հիշատակին[2]:

Ծնողազուրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող երեխաների խնդիրները լուծելու նպատակով Շուշիում կառուցվում է նոր գիշերօթիկ դպրոց: Եռահարկ շինությունը, որում կապրեն արցախցի ութսուն երեխաներ, կառուցվում է ամերիկահայ անվանի բարերար Հրայր Հովնանյանի նվիրատվությամբ և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ[3]:

Ներկայումս Մարտակերտի շրջանի Վանք գյուղում կառուցվում է Սուվորովի և Մադաթովի անվան զինվորական ուսումնարանը՝ մեծ բարերար Լևոն Հայրապետյանի ֆինանսավորմամբ:

Քսանհինգ տարվա կենսագրություն ունի Ստեփանակերտի հմ. 6 հիմնական դպրոցը: Այդ ամբողջ ժամանակաընթացքում կրթօջախը գործել է մանկապարտեզի շենքում և սպասում էր այն երանելի օրվան, երբ կդառնա արդի պայմաններին համահունչ դպրոց: 2014թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ նորակառույց, ժամանակակից հարմարություններով դպրոցական շենքի բացումը: Այն կառուցվել է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի ֆինանսական աջակցությամբ: Բարերարը դպրոցի բացմանն էլ արժեքավոր նվեր մատուցեց՝ համակարգչային դասարանը համալրելով 20 համակարգչով[4]:

Ռուսաստանցի հայ բարերար Արմեն Շահազիզյանն իր միջոցներով 2013թ. սկսեց Ստեփանակերտի Սայաթ Նովայի անվան երաժշտական քոլեջի վերակառուցման աշխատանքները՝ արտաքին և ներքին պատերի ամրացում, սալիկապատում, ինժեներական գծերի նորացում: Երաժշտական քոլեջն այսօր 127 ուսանող ունի, որոնք սովորում են տասը բաժիններում[5]:

---

[1] «Ազատ Արցախ», 3 հուլիսի 2014:
[2] Նույն տեղում, 7 հուլիսի 2012:
[3] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 36:
[4] «Ազատ Արցախ», 16 հոկտեմբերի 2014:
[5] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ 14:

Սփյուռքի հայ բարերաները մեծ ուշադրություն են դարձնում ոչ միայն դպրոցաշինությանը, այլև՝ կահավորմանը, ինչպես նաև ժամանակակից համակարգչային դասարանների բացմանը:

Արցախի դպրոցներում համակարգչային դասարանների բացման գործում ակտիվ գործունեություն են ծավալել իտալահայ բարերարներ տեր ու տիկին Սարո և Սիրան Խուդավերդները: Նրանց նվիրատվությամբ 2012թ. ժամանակակից համակարգչային դասարան է բացվել Ստեփանակերտի հմ.5 հիմնական դպրոցում, Սիրան Խուդավերդիի հոր՝ դոկտոր Կարապետ Բորանյանի հիշատակին[1]:

Ստեփանակերտի հմ.2 հիմնական դպրոցի համակարգչային կաբինետը կահավորել է մեծ բարերար Արա Աբրահամյանը, իսկ աշխարհագրության կաբինետը՝ ամերիկահայ թոշակառու ամուսիններ Կարողլանյանները:

Նոր ուսումնական ռազմավարությունը (ՆՈՒՌ), որն Արցախում ներդրվեց չորս տարի առաջ, արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի հովանավորությամբ, մեկ աշակերտի՝ մեկ համակարգիչ ծրագրով, առաջին փուլում ընդգրկեց Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարին տակ գյուղի) դպրոցները: 1-4-րդ դասարանցիներն ապահովվեցին XO տիպի համակարգիչներով՝ որպես ուսումնական գործիք, իսկ դասվարներն էլ անցան համապատասխան վերապատրաստումներ: Կրթական ծրագիրը նպատակ է հետապնդում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ հետաքրքիր, արդիական և ավելի արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Այնուհետև XO համակարգիչներով աշխատելու ուղղությամբ վերապատրաստվեցին 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչները:

2014թ. ուսումնականից ծրագրի աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով առաջին անգամ XO տիպի համակարգիչներ են բաժանվել շրջկենտրոնների դպրոցների տարրական դասարաններին: Բացի դրանից Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում նոր տեսակի համակարգիչներ են բաժանվել 6-րդ դասարանցիներին: Դրանք «Intel» կազմակերպության կողմից հատուկ դպրոցականների համար ստեղծված նոր սերնդի նեթբուքներ են, որոնք ունեն ավելի մեծ հնարավորություններ, տեխնիկապես հզոր են XO- ներից և ավելի արդյունավետ կլինեն ուսումնական գործընթացում օգտագործելու համար: ՆՈՒՌ ծրագրի պատասխանատուները Ստեփանակերտի դպրոցների համար ձեռք են բերել նաև պրոյեկտորներ, որոնք դպրոցներին բաժանվել են նեթբուքների հետ: Դպրոցներին

[1] «Ազատ Արցախ», 21 մարտի 2013:

բաժանվել են 800 նեթբուքներ, իսկ չորս տարվա ընթացքում դրանք կհասնեն 7200-ի[1]:

2002թ. սեպտեմբերին ֆրանսահայ բարերար Սամվել Շնորհոքյանի կողմից մարդասիրական օգնության կարգով ուղարկված գրենական պիտույքներով ու դպրոցական այլ իրերով լի 300 աշակերտական պայուսակները բաշխվել են Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին[2]:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում մանկապարտեզների շինարարությանն ու կահավորմանը:

Բարերար Էդիկ Ղուլյանի ֆինանսական աջակցությամբ կառուցվել և շահագործման է հանձնվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի 120 տեղանոց մանկապարտեզը: Ներկայումս բարերար Սեյրան Կարապետյանի ֆինանսավորմամբ Ստեփանակերտում կառուցվում է 360 տեղանոց հմ.3 մանկապարտեզը:

Բարերար Արմեն Թոփուզյանի հովանավորությամբ կառուցվել է ժամանակակից խաղահրապարակ Քաշաթաղի շրջանի Քարեգահ համայնքում, վերանորոգվել է Այգեստանի մանկապարտեզի շենքը բարերար Ժանետ Ուուլշի ֆինանսական աջակցությամբ: Հայ օգնության միության Արցախի մանկապարտեզներին է նվիրատվություն փոխանցել ամերիկահայ բարերար, ՀՕՄ-ուհի Զասիկ Բունիաթյանը, որը տրամադրվել է բոլոր մանկապարտեզների սաներին և աշխատակիցներին[3]:

Ֆրանսահայ բարերարների նվիրատվությամբ մանկապարտեզ է կառուցվել Մարտունու շրջանի Սոս համայնքում, որտեղ նախադպրոցական կրթություն են ստանում ավելի քան հիսուն երեխաներ[4]: Մանկապարտեզների կառուցումը և կահավորումը կարևոր է ոչ միայն երեխաների համար, այլ նաև նպաստում են տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

ԱՄՆ քաղաքացիներ Զորջ և Քերոլայն Նաջարյանները Մարտակերտի շրջանում կատարել են մի շարք մարդասիրական դրամաբաշխություններ: Շրջկենտրոնի մանկապարտեզին հատկացրել են 145 հազար դրամ, Մարաղա գյուղի 65 երեխաների՝ 15 հազարական դրամ, իսկ Ստեփանակերտում բնակվող երեք հաշմանդամ

[1] Նույն տեղում, 25 հոկտեմբերի 2014:
[2] ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, g.1, կ 9, պ.մ. 43, թ.36:
[3] «Ապառաժ», 9-16 հունվարի 2008:
[4] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ 18:

երեխաների ծնողներին տրամադրվել են 290 հազար դրամ՝ նրանց հետագա բուժումը ՀՀ-ում և ՌԴ-ում կազմակերպելու համար[1]:

Սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը: 2005 թվականից Շուշիի «Նարեկացի» արվեստի միության կենտրոնում գործում է «Արամ Մանուկյան» ամառային ճամբարը, որի կազմակերպիչներն են կանադահայ հասարակական-մշակութային գործիչ, բանաստեղծ Հայդուկ Շամլեանը և նրա կինը՝ մանկավարժ Աիդա Շամլեան-Դավիդեանը: Շուշեցի երեխաների համար այստեղ կազմակերպվում են հայրենասիրության և քաղաքացիական պարտքի զգացումի մասին դասեր ու մարզական պարապմունքներ[2]:

ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող երեխաների խնամքի և պաշտպանության հմ. 1 և հմ. 2 գիշերօթիկ հաստատությունների սաների համար ամերիկահայ Գրիգոր Հակոբյանի աջակցությամբ ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Արցախի տարբեր տեսարժան վայրեր[3]:

Կապանի ոսկու կոմբինատի տնօրեն, կանադահայ Հրաչ Զաբրայանի հովանավորությամբ Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի հարևանությամբ կառուցվել է ռազմամարզական խաղահրապարակ՝ տարբեր մարզասարքերով, որտեղ աշակերտներից բացի կարող են մարզվել նաև քաղաքի երիտասարդները[4]:

Արտերկրներում ապրող մեր հայրենակիցների աջակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր մշակույթի բնագավառում: Դեռ պատերազմի թեժ օրերին սիրիահայ Զաքար Քեշիշյանի կողմից 1992թ. Շուշիի «Արամ Մանուկյան» վարժարանում հիմնադրվեց «Վարանդա» երգչախումբը: Այն ի սկզբանե եղել է մանկապատանեկան երգչախումբ: «Իհարկե, այդ տարիներին Շուշիում սակավաթիվ մարդիկ էին ապրում և, սոցիալական պայմաններից ելնելով, շատ հաճախ երեխաները չէին կարողանում ներկայանալ պարապմունքներին», - հիշում է Զաքարը, սակայն այսօր հպարտանում է, որ «Վարանդա» երգչախմբում մոտ 500 երեխա է երգել 20 տարիների ընթացքում, իսկ այսօր երգչախումբ են հաճախում իր առաջին սաների երեխաները, որոնց նա իր թոռներն է համարում: Երգչախումբն այսօր գտնվում է պետական հոգածության ներքո

[1] ԼՂՀ պետական արխիվ,Ֆ.180, ց.1, կ 9, պ.մ.43, թ.57:
[2] «Ազատ Արցախ», 20 հուլիսի , 2013:
[3] Նույն տեղում , 28 օգոստոսի 2014:
[4] Նույն տեղում, 20 սեպտեմբերի 2014:

և իր գործունեությունը շարունակում է մանկական, պատանեկան և երիտասարդական կազմերով: Երգչախումբը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, զորամասերում, դպրոցներում, ինչպես նաև Հայաստանում և Լիբանանում: Երգչախմբի մասին նկարահանվել է երկու վավերագրական ֆիլմ, իսկ 2004-ին «Վարանդան» ձայնագրել է «Բերդաքաղաք» խտասկավառակը[1]: Արցախում երգչախմբային արվեստի զարգացման գործում ունեցած ծառայությունների համար երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Զաքար Քեշիշյանը 2002-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ», Հանրապետության հռչակման 20-ամյա հոբելյանի առթիվ «Երախտագիտություն» մեդալներով[2]:

Արցախում մի շարք բարեգործությունների շարքում ամերիկահայ մեծ բարերար Վահե Կարապետյանը ընդգրկեց նաև «Արցախի ձայն» երաժշտական նախագծով խմբի ամերիկյան շրջագայության ֆինանսավորումը[3]:

Սփյուռքահայ բարերարներն իրականացնում են մշակութային շինությունների վերակառուցման, նորոգման աշխատանքներ: Մոսկվաբնակ բարերար Կոնստանտին Մարգարյանի ֆինանսավորմամբ վերանորոգվեց Շուշի քաղաքի նախկին Մարիամյան օրիորդաց գիմնազիայի շենքը, որտեղ ներկայումս տեղակայվել են ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը և այլ հաստատություններ:

ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի քաղաքացիներ Ալեք Բաղդասարյանի, Շեիլա Պապայանսի, Նիկ Կանայանի, Հայկուշ Քոիլերի ֆինանսավորմամբ Շուշի քաղաքում վերանորոգվեց պատմամշակութային արժեք ներկայացնող արևելյան բաղնիքը և իջևանատուն շուկան:[4]

Մոսկվաբնակ գործարար Կարեն Ավագիմյանի հովանավորությամբ և ԼՂՀ իշխանությունների աջակցությամբ շահագործման հանձնվեց Արցախը խորհրդանշող՝ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» համալիրի բարեկարգված տարածքը[5]:

Ստեփանակերտի «Ստեփան Շահումյանի» անվան պուրակի վերակառուցմանը ֆինանսական աջակցություն են ցուցաբերել Իսահակ և Հայկազ Սեյրանյանները:

---

[1] «Ապառաժ», 1-15 սեպտեմբերի, 2012:
[2] «Ազատ Արցախ», 15 սեպտեմբերի 2011:
[3] Վահե Կարապետյան, Կամք, որ հայինն է, Եր., 2011, էջ 506:
[4] ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ. 26, պ.մ-159, թ. 117:
[5] «Ստեփանակերտ», 30 օգոստոսի 2013:

Հայ բարերարները հայտնի են եկեղեցաշեն գործունեությամբ: Նրանց կողմից ֆինանսավորվել են մի շարք եկեղեցիների կառուցումն ու վերակառուցումը: Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին կառուցվել է ծնունդով վաղուհասցի ռուսաստանաբնակ գործարար Գրիգորի Հայրապետյանի ֆինանսավորմամբ[1]:

Հադրութի շրջանի Քարագլուխ գյուղը, դեռ պատերազմը չսկսած՝ 1991-ին, ազերիների կողմից հիմնովին ավերվել էր: Ազատագրումից հետո քարագլուխցիները վերադարձան գյուղ, բայց հարազատ օջախները ավերված էին, ուստի նրանք բնակություն հաստատեցին գյուղի ստորոտում, իսկ բնակատեղին անվանեցին Ձորագյուղ: 2013թ. սեպտեմբերի 5-ին Քարագլուխ գյուղի բարձունքում տեղի ունեցավ Սուրբ Հովհաննես Մկրտիչ նորակառույց եկեղեցու բացումը: Կառուցումը նախաձեռնել և իրականացրել է արմատներով քարագլուխցի Ս.Պետերբուրգի բնակիչ, ճարտարապետ Մաքսիմ Աթայանցը՝ հույս ունենալով, որ եկեղեցու կառուցումը խթան կհանդիսանա, որպեսզի իր շուրջը համախմբի մարդկանց[2]:

Ամերիկահայ գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի ֆինանսական աջակցությամբ 2009թ. վերանորոգվել է Քաշաթաղի շրջանի 17-րդ դարի Սուրբ Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010-ին՝ 17-րդ դարի Միրիկ եկեղեցու տանիքը[3]:

Վերջին տարիներին Արցախում բարեգործական մեծաթիվ ձեռնարկումներով աչքի է ընկել ռուսաստանաբնակ, ծննդով մարտունեցի Ռուբեն Հայրապետյանը: Բարերարն ակտիվ աջակցություն է ցուցաբերում ԼՂՀ կառավարության կողմից բազմազավակության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև մասնակցում Ամարաս վանքի վերանորոգման և Մարտունու Սուրբ Ներսես Մեծ եկեղեցու կիրակնօրյա դպրոցի և երիցտան կառուցման աշխատանքներին[4]:

Քաշաթաղի շրջանի Բերձորի Սուրբ Նահատակաց եկեղեցին կառուցվել է ամերիկահայ բարերար Վահե Կարապետյանի ֆինանսական միջոցներով: «Արցախը դարձավ իմ ոգեշնչման աղբյուրներից մեկը, - գրում է նա: Ես հասկացա, որ Արցախը լույս է, հույս է, այն մեր ազգային խորհրդանիշն է: Իսկ խորհրդանիշը պետք է պահել աչքի լույսի պես: Արցախի վերածննդից մինչև այսօր նրա կարգավիճակը միջազգային

[1] «Ազատ Արցախ», 23 փետրվարի, 2012:
[2] «Ազատ Արցախ», 14 սեպտեմբերի 2013:
[3] Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, Եր., 2011, էջ 125:
[4] «Ազատ Արցախ», 20 սեպտեմբերի 2014:

հարթակում դեռ չի որոշվել, բայց մեզ համար այն Հայրենիք է, մեր ազգի թալիսմանն ու փարոս»[1]:

Սփյուռքահայ բարերարներն իրենց մեծ ներդրումն ունեն ԼՂՀ-ում իրականացվող առողջապահական ծրագրերի իրականացմանը: Նրանց աջակցությամբ շահագործման են հանձնվել տասնյակ բուժկետեր ԼՂՀ տարբեր շրջաններում, վերանորոգվել հիվանդանոցներ, կազմակերպվել բուժաշխատողների վերապատրաստում և այլն:

ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրավան գյուղի բուժկետ-գյուղապետարանի վարչական շենքի կառուցումն իրականացվել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, բարերար Օնիկ Հարությունյանի ֆինանսավորմամբ[2]: Ամերիկահայ բարերար Ջեյմս Թուֆենկյանի ֆինանսական աջակցությամբ կառուցվել է Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի բժշկական համալիրը[3]: Այն սպասարկում է 20 գյուղերի բնակիչների և շարունակում է իր գործունեությունը «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի և ԼՂՀ առողջապահության նախարարության աջակցությամբ[4]:

Ամերիկահայ բարերար Վաչե Հովսեփյանի, Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների միության և հատկապես բարերար Վիգեն Կարապետյանի հովանավորությամբ Մարտունու շրջանի Աշան գյուղում 2003 թվականին բացվեց ատամնաբուժական կլինիկա՝ համալրված բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: Կլինիկայում դպրոցականները ստանում են անվճար բուժօգնություն: Սակայն, լինելով միակը շրջանի համայնքներում, բացի դպրոցականներից, ատամնաբուժարանի ծառայություններից օգտվում են նաև հարևան գյուղերի բնակիչները[5]:

Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաքում ապրող բարերարներ Համլետ Համբարձումյանի և Վոլոդյա Ավագյանի բարեգործությամբ վերանորոգվեց Մարտունու շրջանի Ճարտար գյուղի տեղամասային հիվանդանոցը[6]:

Շուշիի հիվանդանոցի հետ սերտ կապեր է հաստատել հայտնի սիրիահայ վիրաբույժ ACMA (Հայկական քրիստոնեական բժշկական ասոցիացիա) կազմակեր-

---

[1] Վահե Կարապետյան, նշվ. աշխ., էջ 483:
[2] ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ.-11, պ.մ. – 50, թ. 85:
[3] Նույն տեղում, թ.71:
[4] Հայկական Սփյուռք. Տարեգիրք 2010, Եր., 2011, էջ 124:
[5] «Ազատ Արցախ», 8 սեպտեմբերի 2011:
[6] Նույն տեղում , 3 հուլիսի 2014:

պության նախագահ Ջանիի Հադդաթը (Հովհաննես Դեմիրճյան): Նրա ղեկավարությամբ կազմակերպության անդամները մարդասիրական առաքելությամբ չորս անգամ այցելել են Շուշի: Չորրորդ այցելության ժամանակ Շուշիի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Վիգեն Խաչատրյանի հետ միասին կատարվել են 80 հետազոտություններ, ինչպես նաև 30 վիրահատություններ՝ զոբ, լեղապարկ, թուքք և ճողվածքներ (գրիժաներ): Հաջորդ այցելության ժամանակ նախատեսվում է Անգլիայից բարձրակարգ մասնագետների երկու խումբ բերել Արցախ, և կազմակերպել տեղի բժիշկների համար դասընթացներ[1]:

2013 թվականի սեպտեմբերին մոսկվաբնակ հայ բարերար, «Լուդինգ» ընկերության հիմնադիր-նախագահ Արթուր Վարժապետյանի կողմից ԼՂՀ առողջապահության նախարարությանը տրամադրվեց երկու ռեանիմոբիլ և շտապ օգնության չորս գծային ավտոմեքենաներ: Նույն թվականի սեպտեմբերի 24-ին Ստեփանակերտում շահագործման հանձնվեց ԼՂՀ Առողջապահության նախարարության նորակառույց, ժամանակակից պայմաններին համապատասխան հանրապետական բժշկական կենտրոնը: Այն կառուցվել է Մոսկվայում գործող «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ, մեծ բարերար Սամվել Կարապետյանի ֆինանսական աջակցությամբ: Կենտրոնը հագեցած է նոր սերնդի առաջնակարգ բուժսարքավորումներով: Այն նախատեսված է 136 մահճակալի համար, այդ թվում 60-ը՝ թերապևտիկ բաժանմունքում: Առկա է պլանային հիվանդների ընդունարան, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության բաժանմունք՝ իր բարձրակարգ բժշկական սարքավորումներով հագեցած երկու ռեանիմոբիլներով, վիրահատական բլոկ, հեմոդիալիզի բաժանմունք, վարչատնտեսական մաս և շենքից դուրս տեղակայված տնտեսական մաս[2]: ԼՂՀ նախագահի առաջարկությամբ հիվանդանոցը կրում է բարերարի ծնողների՝ Սարգիս և Ամալյա Կարապետյանների անունը:

Այսօր էլ սփյուռքահայ բարերարները շարունակում են իրենց հայրենանվեր, ազգանպաստ գործունեությունն Արցախում: Նրանց բարեգործական գործունեությունը վկայում է Սփյուռքի հոգեհարազատության մասին:

[1] Նույն տեղում, 22 նոյեմբերի 2012:
[2] Նույն տեղում , 26 սեպտեմբերի 2013:

**Арарат Варданян, Вклад благотворителей Армянской диаспоры в реализации образовательно - культурных и здравохранительных программ в НКР -** Нагорно-Карабахская Республика будучи непризнанным государством лишена возможности получать кредиты на развитие экономической, социальной, культурной, здравохранительной и других сфер от международных финансовых организаций. Следовательно, поддержка Армянской диаспоры, благотворительных, культурных организаций и церкви является неоценимой. Велика роль индивидуальных спонсоров, которые осуществляют в Арцахе ряд благотворительных программ. Благодаря их финансовой поддержке претворились в жизнь многие благотворительные, а также образовательно-культурные, здравохранительные прогаммы.

**Ararat Vardanyan, The contribution of the benevolent Armenians from the Diaspora in the fulfilment of educational - cultural and healthkeeping programs in the NKR -** The Nagorno-Karabakh Republic, being an unrecognized state is deprived of the opportunity to get credits from international financial organizations for the development of social-economic, cultural, healthkeeping and other fields. Consequently, the support of the Diaspora, benevolent, cultural organizations and the churches is invaluable, as well as the role of the individual sponsors, that realize series of benevolent programs. Due to their financial support most benevolent healthkeeping and educational-cultural programs became possible.

**Արարատ Վարդանյան** – պատմ. գիտ. թեկնածու, Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի դոցենտ: